

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016 թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն N° )

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՄԵԿՏՈՐԻ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Արտոնագրային ստորաբաժանման հիմնական նպատակները և խնդիրներն են՝**

1. Մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանության հետ կապված օրենսդրությամբ սահմանված գործողությունների իրականացումը և տեղեկատվության ապահովումը:
2. Նոր սարքերի, սարքավորումների և տեխնոլոգիաների ստեղծման ժամանակ արտոնագրային ունակության և արտոնագրային մաքրության ապահովումը, արտոնագրային փաստաթղթերի օգտագործման ժամանակ մեթոդական հսկումը:
3. Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կատարվող գիտահետազոտական թեմաների ուսումնասիրությունը՝ նոր գյուտեր կամ օգտակար մոդելների հայտ բերելու նպատակով:
4. Հայտերի ձևակերպումը:
5. Արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների) պաշտպանությունը:
6. Հայաստանի ազգային արարային համալսարանում կատարվող թեմաներին արտոնագրային լրատվությամբ և փաստաթղթերով սպասարկումը:
7. Գյուղատնտեսության բնագավառում գիտամանկավարժական և ինժեներատեխնիկական աշխատակազմի որակավորման բարձրացումն արտոնագրության բնագավառում:

8. ՀԱԱՀ արտոնագրային հիմնապաշարների համալրման օժանդակումը:

## II. Արտոնարային ստորաբաժանման գործառույթները

1. Արտոնագրային ստորաբաժանումն իր նպատակների և խնդիրների իրականացման համար արտոնագրային ունակությամբ և մաքրությամբ նոր մեքենաների, սարքերի, տեխնոլոգիաների, բուժիչ, ախտահանիչ և կանխարգելիչ միջոցների ստեղծման ժամանակ իրականացնում է՝

1.1. նոր գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների ժամանակին հայտնաբերում գիտահետազոտական և դիպլոմային աշխատանքներում.

1.2. հեղինակների մասնակցությամբ թեմային վերաբերվող արտոնագրային դասի /ՄԱԴ/ որոշում և արտոնագրային ուսումնասիրությունների կատարում.

1.3 աշխատանքների արտոնագրային մաքրության ստուգում հեղինակների մասնակցությամբ.

1.4 գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների նախնական փորձաքննություն, գրանցումների կատարում, նոր հայտերի ներկայացում մտավոր սեփականության գործակալություն և պետական փորձաքննության ընթացքին հետևում:

2. Պետության և հեղինակային առաջնությունն ապահովելու նպատակով արտոնագրային ստորաբաժանումը.

2.1 կազմակերպում է արդյունաբերական սեփականության օբյեկտների ժամանակին հայտնաբերում գիտահետազոտական և դիպլոմային աշխատանքներում.

2.2 մասնակցում է հողվածների տպագրության հնարավորություններն որոշող փորձաքննական հանձնաժողովի աշխատանքներին.

2.3. կազմակերպում և օգնում է նոր սելեկցիոն նվաճումների վերաբերյալ հայտերի ձևակերպմանը, որոնք ներկայացվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն.

2.4. կատարում է պետական տուրքերի փոխանցում և հետևում նրանց հետագա վճարումներին:

3. Արտասահմանում արտոնագրելու նպատակով.

3.1 կատարում է գյուտերի ընտրություն և ներկայացնում է արտասահմանյան երկրների պահանջներին համապատասխան հայտեր.

3.2 մասնակցում է արդյունաբերական սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի ընձեռնման՝ լիցենզիոն պայմանագրերին վերաբերվող բանակցություններին և հետագա աշխատանքներին, որոնք վերաբերվում են պայմանագրերի կատարմանը:

4. Արտոնագրային ստորաբաժանումը ստուգում է գիտահետազոտական աշխատանքների արտոնագրային մաքրությունը և մեթոդական օգնություն է ցուցաբերում արտոնագրային փորձաքննության բոլոր փուլերում:

5. Համալրում է ՀԱԱՀ արտոնագրային ֆոնդը նոր արտոնագրային լրատվության աղբյուրներով: